



«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ Ֆիզիկա

Թեման՝ Գիտության զարգացումն ու ծագող էկոլոգիական
հիմնախնդիրները

Դպրոց՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վահան գյուղի միջնակարգ դպրոց>>

ՊՈԱԿ

Ուսուցիչ՝ Ալվարդ Սարգսյան

Ղեկավար՝ Խաժակն Նավասարդյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն-----	3
Գիտության զարգացումն ու ծագող էկոլոգիական հիմնախնդիրները-----	5
Մթնոլորտի մարդածին աղտոտումըն դրա էկոլոգիական հետևանքները-----	10
Մարդածին ազդեցությունը ջրոլորտի վրա և դրա հետևանքները -----	12
Գլոբալ էկոլոգիական խնդիրներ -----	13
Եզրակացություն -----	16
Օգտագործված գրականության ցանկ -----	18

Ներածություն

Մեր շրջակա միջավայրը հեզհետե ավելի ու ավելի քաղաքակերպ է դառնում: Մենք բոլորովին կտրվել ենք բնությունից, մինչդեռ մարդկությունը մինչև վերջերս բնաշխարհի հետ անմիջական կապ ուներ:

Մարդիկ գիտակցում էին, որ մի բան փոխելով՝ մի այլ բանի փոփոխություն է առաջանում, հասկանում էին, որ բնության հնարավորություններն անսահմանափակ չեն և որ բնության մեջ ամեն ինչ փոխկապակցված է:

Այսօր մենք կորցրել ենք այդ ըմբռնումը: Միայն մասնագետներն են հասկանում էկոհամակարգը և այն գինը, որի շնորհիվ ապահովվում է մեր գոյությունը:

Մենք անտառներ ենք ոչնչացնում չհասկանալով, որ դրանից տուժում է հովիտներում ջրի բաշխումը, թունավոր թափոններ ենք նետում, կարծելով, թե դրանք, գետնի տակ անցելով, անհետանում են: Բույսեր ու կենդանիներ ենք ոչնչացնում, որոնց անվանումները նույնիսկ չգիտենք, առանց գիտակցելու, թե ինչ օգուտ կարող էին մեզ տալ...

Ասում են՝ Ինդրայի երկնքում մարգարտաշար մի ցանց կա, հյուսված է այնպես, որ երբ մարգարտահատիկներից մեկին նայես մյուսների արտացոլումը կտեսնես նրա մեջ:

Ճիշտ նույն կերպ աշխարհում յուրաքանչյուր առարկա միայնակ, մնացածներից անկախ գոյություն չէ, այլ մասնիկն է մյուս բոլոր առարկաների: Կարելի է ասել հենց ինքը մյուս բոլոր առարկաններն է:

Էկոլոգիա բառացի նշանակում է գիտություն ապրելակերպի մասին սակայն այն ընդգրկում համակարգ է, որի մեջ մտնում են հողը, ջուրը, օդը, բուսական ու կենդանական աշխարհները և մարդը:

Էկոլոգիա տերմինը առաջին անգամ օգտագործել է գերմանացի գիտնական Էռնեստ Հեկկելը 1866 թվականին: Այն ծագել է հունարեն «Օլյոս» տուն և «Լոգոս»-

գիտություն բառերից: Այսպիսով, էկոլոգիան մի գիտություն է, որն ուսումնասիրում է, թե ինչպես են ապրում բոլոր կենդանի օրգանիզմները իրենց բնական տանը, որոնք են այն գործընթացներն ու երևույթները, որ ապահովվում են կյանքն այդ տան մեջ:

Հատկանշական է, որ էկոնոմիա բառը նույնպես նույն արմատն ունի՝ «տուն» («տուն և հաշիվ») նշանակում է՝ տնտեսություն վարելու (հաշվելու) արվեստ: Հենց սա նկատի ունենալով, Հեկկելը գրում է «էկոլոգիա» ասելով, հասկանում ենք բնության էկոնոմիկային վերաբերող գիտելիքների ամբողջությունը, կենդանու և նրան շրջապատող օրգանական և անօրգանական աշխարհների փոխհարաբերությունների ողջ բազմազանության ուսումնասիրությունը...»:

Կենդանի օրգանիզմների և շրջակա միջավայրի փոխհարաբերությունների ուսումնասիրությունը գտնվում է կեսաբանության հետաքրքրության շրջանակներում սակայն մարդու (մարդկային հասարակության) և բնության փոխհարաբերություններն իրենց բնույթով էապես տարբերվում են կենդանիների տեսակների և շրջակա միջավայրի փոխհարաբերություններից:

Էկոլոգիայի այն բաժինը, որն ուսումնասիրում է մարդու և շրջակա միջավայրի փոխհարաբերությունները, անվանվում է «սոցիալական էկոլոգիա» կամ «մարդու էկոլոգիա»:

Եվ եթե նախկինում շրջակա միջավայրի հիմնախնդիրները դիտվում է որպես գուտ բնագիտական խնդիրներ, ներկայումս (սոցիալական էկոլոգիայի սահմաններում) նրանք վերածվում են տնտեսական, սոցիալական, բնագիտական, հումանիտար հիմնախնդիրների ամբողջության:

3. Իրոկեզների համայնքի խորհուրդն իր ժողովներն այսպես էր սկսում.

«Որոշում կայացնելիս եկեք մտածենք թե այսօրվա մեր որոշումներն ինչպես են անդրադառնալու հաջորդ յոթ սերունդների վրա»:

Յուրաքանչյուր քվեարկության ժամանակ հաշվի էին առնվում նաև այն բոլորի շահերը, որվքեր ապրելու էին իրենցից երկու հարյուր տարի հետո:

Գիտության զարգացումն ու ծագող էկոլոգիական հիմնախնդիրները

Էկոլոգիական կրթություն-էկոլոգիական գիտելիքների նպատակային, ծրագրված և կրթական համակարգով ձեռք բերվող գործառույթ է:

Էկոլոգիայի ժամանակակից ուսումնասիրությունը և վերլուծությունը ժամանակակից շատ երկրներում, նաև Հայաստանի Հանրապետությունում պարտադրել է Էկոլոգիական կրթության դասավանդման ծրագրեր մտցնել: Դասավանդումը իրականացվում է դպրոցական, բուհական և հասարակական ծրագրերով և սահմանված կարգով:

Էկոլոգիական դաստիարակություն-նպատակաուղղված է բնապահպանական ակտիվ դիրքորոշում ձևավորել հասարակության մեջ: Էկոլոգիական դաստիարակությունը անհրաժեշտ է բոլորի համար, իրականացվում է բնապահպանական և էկոլոգիական կրթական ծրագրերի դասավանդման, հասարակության մեջ էկոլոգիական մտածողության արմատավորման միջոցով:

Էկոլոգիական դաստիարակության հիմնական դրույթները՝

1 . Մարդը պատասխանատու է կենդանական և բուսական աշխարհի կենսաբազմազանության պահպանման համար;

2. Բնությունը օրգանական աշխարհի բնօրրանն է՝

-բնությունը անվերջ է և անսահման

-մարդ-բնություն փոխհարաբերությունները պետք է հավասարակշռված և ոչ թեթևամական լինեն:

3. Որքան կենսոլորտը բազմազան է, այնքան կայուն է:

4. Էկոլոգիական ճգնաժամերը առաջարկում են բնության վրա մարդու անթույլատրելի և ոչ հավասարակշիռ գործողություններով:

5. Համամոլորակային էկոլոգիական մտածողության ձևավորումը անհրաժեշտություն է: Երկիրը մարդկության տունն է:

6. Մարդկությունը պետք է խնայողաբար և էկոլոգիապես անվտանգ օգտագործի բնական ռեսուրսները:

Էկոլոգիական մշակույթ-մարդկային մտածողության և բնական պայմանների համալիր ամբողջությունն է, քաղաքակիրթ վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ:

Էկոլոգիական աշխարհայացք:

Այն արտացոլում է մարդու ու բնության այժմյան փոխհարաբերությունների և մտածողության ամբողջությունը: Էկոլոգիական մտածողության ամենատարածված ձևը, որը գերակայել է արդյունաբերության զարգացման սկզբնական շրջանից մինչև XIX դարի երկրորդ կեսը, համարվում է մարդակենտրոն մտածողությունը, որը բնորոշվում է հետևյալ առանձանահատկություններով՝

Մարդը վեր է ամեն ինչից, բնությունը մարդու սեփականությունն է:

1. Աշխարհը համաստորադաս կառուցվածք ունի, բրգաձև կառուցվածքի ամենաբարձր կետում մարդն է:

2. Բնության հետ փոխհարաբերությունները նպատակաուղղված են միայն մարդու պահանջմունքի բավարարմանը:

3. Ճիշտ և թույլատրելի է այն, որը բավարարում է մարդու պահանջմունքերը:

4. Էթնիկ նորմերը և իրավունքերը գործում են միայն մարդկային հասարակության մեջ և չեն տարածվում բնաշխարհի վրա;

5. Բնության զարգացման ամբողջ ընթացքը պետք է ենթարկվի մարդկության զարգացմանը:

Այսպիսի մտածողությունը կարող է կործանարար լինել և այդ պատճառով ստեղծվել է նոր՝ բնակենտրոն (էկոցենտրիկ) մտածողություն, որի դրույթներն են՝

1. Բարդագույն արժեք համարել մարդու և բնության ներդաշնակ զարգացումը: Մարդու բնական համակեցության անդամ է:

2. Մերժել աշխարհի համաստորադասական կառուցվածքը:

3. Մարդու և բնական համակեցությունների պահանջների հավասար բավարարում:

4 . Ճիշտ և թույլատրելի է այն, որը չի խաթարում բնական էկոլոգիական հավասարակշռությունը:

5 . Էթիկ նորմերը և իրավունքները հավասարապես տարածվում են և՛ մարդկային հարաբերությունների, և՛ բնական աշխարհի վրա:

6. Մարդու և բնության զարգացումը փոխշահավետ կոելվոյուցիոն միասնական ընթացք է:

Աշխարհի բոլոր երկրները այժմ մշակում և փորձում են ձևավորել միասնական էկոլոգիական աշխարհայացք:

Մարդածին ազդեցությունը-մարդու տնտեսական և այլ գործունեությամբ կատարվող փոփոխություններն են շրջական միջավայրում:

Մարդածին ազդեցությունը գերակշիռ դեպքերում նպատակաուղղված գործողություն է և մարդու կողմից իրականացվում է որոշակի նպատակի հասնելու համար սակայն լինում են նաև տարերային և կամայական մարդածին ազդեցություններ, որոնք հետևանք են որևէ գործողության, օրինակ չոր շրջաններում ոռոգվող հողերի կրկնակի աղակալումը:

Կենսոլորտի վրա մարդածին ազդեցությունը կարող է լինել դրական և բացասական: Դրական են համարվում բնական պաշարների վերարտադրությունը, անտառների, անտառապաշտպան շերտերի հիմնումը, գրունտային ջրերի պաշարների վերականգնումը և այլն:

Բացասական են համարվում՝ զագվածային անտառահատումները, քաղցրահամ ջրերի անխնա օգտագործումը, հողերի անապատացման և աղակալմանը նպաստելը, բույսերի և կենդանիների առանձին տեսակների ոչնչացումը: Ամենաձավալուն և տարածված

բացասական մարդածին ազդեցությունը կենսոլորտի աղտոտումն է, ինչպիսիք են թթվային անձրևները, ռադիոակտիվ մնացորդները և այլն:

Աղտոտումը-շրջակա միջավայրի մարդածին ազդեցությամբ կատարվող ոչ ցանկալի փոփոխություններ են, որոնք կարող են ուղղակիորեն կամ անուղղակի ձևով փոխել օրգանիզմների գոյապայմանները: Փոփոխությունները մարդու վրա կարող են ազդել անմիջական, ջրերի, գյուղատնտեսական մթերքների օգտագործման և այլ ուղիներով (Ֆ. Ռամայան):

Աղտոտման տեսակներ համարվում են՝ ֆիզիկական (ջերմությունը, աղմուկը, ռադիոակտիվությունը, էլեկտրամագնիսականությունը), քիմիական (ծանր մետաղները, առանձին քիմիական նյութերը և տարրերը, պեստիցիդները, պլաստմասսաները), կենսաբանական (մանրէաբանական, գենային ինժեներական) աղտոտումները:

Բնությունն ինքնակարգավորման բացառիկ հատկության ունի սակայն մարդու ազդեցությունը բնության վրա այն աստիճանի է հասել, որ այդ սկզբունքը կարող է և չգործել:

Արդի շրջանում մարդու տնտեսական գործունեության և էկոլոգիական երևույթների միջև հակասություններն այն աստիճան են արվել, որ էկոհամակարգերը սկսել են կորցնել ինքնակարգավորման ընդունակությունը, որը և ստացել է էկոլոգիական ճգնաժամ անվանումը:

Էկոլոգիական ճգնաժամի հարցերը լուծելու համար անհրաժեշտ է հաշվի առնել երկրագնդի տարբեր ոլորտներում կատարվող փոփոխությունները՝

1. Բարոլորտում՝ հողերի անապատացումը, ջրային և հողային էրոզիան, հողերի աղտոտումը թունավոր նյութերով, բերրիության անկումը, ճահճացումը, աղակալումը, շահագործման ժամանակ:

2. Ջրոլորտում՝ քաղցրահամ և ջրային էկոհամակարգերի աղտոտում, ջրավազանների աղքատացում և քաղցրահամ ջրերի պաշարների կրճատում, մանր գետերի և

գետակների չորացում, անցանկալի երևույթներ ջրամբարների և պատվարների կառուցման ժամանակ:

3. Մթնոլորտում՝ ինտենսիվ աղտոտում, երկրագնդի ջերմացում, օզոնային թաղանթի քայքայում, թթվային անձրևներ, աերոզոլային խտացումներ:

4. Կենսածին համակեցություններում՝ անտառահատումներ, կենսոլորտի գենոֆոնդի և կենսաբազմազանության աղքատացում, կանաչ տարածքների ոչնչացում, բուսական և կենդանական տեսակների թվաքանակի նվազում և անհետացում:

5. Բնակության միջավայրում՝ արտադրական ու կենցաղային թափոնների ավելացում, կենդանի օրգանիզմների վրա քիմիական, ֆիզիկական և կենսաբանական միջոցներով ազդեցության ավելացում, տեխնածին վթարների և աղետների աճ:

Ջրոլորտը երկրագնդի թաղանթ ոլորտներից մեկն է և ներառում է համաշխարհային օվկիանոսը, հոսող և կանգնած ջրավազանները, ստորգետնյա ջրերը: Երկրագնդի վրա ջրի շրջանառությունը անընդհատ է, միավորում է ջրոլորտի կառուցվածքային բոլոր տարրերը և կատարվում է փակ «համաշխարհային օվկիանոս-մթնոլորտ-ցամաք» համակարգով: Երկրագնդի մակերևույթի մոտ 71% -ը ծածկված է ջրով:

Համաշխարհային օվկիանոսի ջրերը (1338 մլն³) կազմում են երկրագնդի ամբողջ ջրապաշարի 96 . 5%-ը: Ջրապաշարների աղբյուր են նաև Արկտիկական և Անտարկտիկական սառույցները՝ 24 մլն կմ³:

Գետերով հոսող ջրապաշարները, կախված տարվա եղանակից փոփոխվում են: Հիդրոլոգիական հաշվարկներով, ջրի միջին մակարդակի պայմաններում, աշխարհի գետերի հունների մեջ պարունակվում է 2120 կմ³ ջուր:

Տարեկան գետերը համաշխարհային օվկիանոս են բերում ավելի քան 45 հազ . կմ³ ջուր: Գետային ջրապաշարները երկրագնդի վրա անհավասարաչափ են բաշխված: Եվրասիայում դրանք կազմում են ընդհանուր ջրի միայն 39%-ը: Գետերը հսկայական կարևորություն ունեն մարդկության զարգացման պատմության մեջ: Դրանք

օգտագործվում են հաղորդակցության, էներգիայի ստացման, ջրամատակարարման ջրարբիացման և այլ նպատակներով:

Լճային ջրապաշարները աշխարհում կազմում են 176,4 հազ կմ³: Մթնոլորտը գոլորշու վիճակով 12,9 հազ. կմ³ ջուր է պարունակում:

Քաղցրահամ ջրերի պաշարները գնահատվում են 28 մլն կմ³: Խմելու նպատակով օգտագործվում է դրա միայն 4,2 մլն կմ³, որը կազմում է ջրոլորտի 0,3 %-ը:

Ստորերկրյա ջրերը քաղցրահամ ջրերի պաշարի մոտ 14 % են կազմում: Դրանք առաջացնում են հիգրոերկրաբանական ջրավազաններ, որոնց մեջ ջուրը բնական ձևով պաշտպանված է թափոնների աղտոտումից:

Հայտնի է, որ ջուրը կենդանի օրգանիզմների՝ բջջային կառուցվածքի մաս է կազմում: Ջրային ընդհանուր պաշարների շուրջ 98%-ը հանքայնացված է, աղի և տնտեսական գործունեության համար քիչ գործածական է:

Համաշխարհային օվկիանոսը գործնականում կարող է դառնալ քաղցրահամ ջրերի ստացման աղբյուր, սակայն դրա համար հարկ կլինի մշակել արդյունավետ և հուսալի աղազերծման մեթոդներ: Այդ պատճառով քաղցրահամ ջրերի արդյունավետ և համալիր օգտագործումը, պահպանությունը հանդիսանում է գիտատեխնիկական կարևոր խնդիրներից մեկը:

Մթնոլորտի մարդածին աղտոտումը և դրա էկոլոգիական հետևանքները:

Մթնոլորտի աղտոտումը կատարվում է մարդու գործունեությամբ: Մարդը թափոնային արտադրության հեղինակ է: Մթնոլորտի մարդածին աղտոտման աղբյուրներն են՝

1. Ջերմային և ատոմային էլեկտրակայանները – դրանց շահագործման ժամանակ հեղուկ և պինդ վառելանյութի այրման ընթացքում մթնոլորտ է արտանետվում ծուխ, որի մեջ պարունակվում են ածխածնի, ծծմբի, ազոտի օքսիդներ և այլ նյութեր:

2. Սև և գունավոր մետաղների արտադրությունը:

3. Քիմիական արտադրությունը – այս ճյուղի թափոնները շնորհիվ բարձր թունուկանության և խտության շատ վտանգավոր են մարդկանց, կենդանիների և բույսերի համար: Քիմիական արդյունաբերությունը մթնոլորտ է արտանետում ֆտորի և քլորի միացություններ, ծծմբի օքսիդներ, ամոնիակ, նիտրատային գազեր, ծծմբաջրածին և այլն:

4. Փոխադրամիջոցների արտանետումները- այժմ աշխարհում շահագործվում է մի քանի հարյուր միլիոն ավտոմեքենա, որոնք ծախսում են նավթամթերքներ և մթնոլորտ են արտանետում բենզոպիրեն, ազոտի, ածխածնի և կապարի թունավոր միացություններ:

Մթնոլորտ արտանետվող թունանյութերը մարդու վրա վտանգավոր տարաբնույթ ազդեցություն կարող են ունենալ: Մասնավորապես՝ ծծմբաթթվային անձրևները քայքայում են մարդկանց և կենդանիների թոքային հյուսվածքները, սիլիցիումի երկօքսիդի փոշին առաջացնում է թոքային սիլիկոզ, ազոտի օքսիդները բացի այն, որ վնասում են աչքերի և թոքերի լորձաթաղանթները, առաջացնում են նաև թոքային մառախուղ, ածխածնի օքսիդները վտանգավոր են սիրտանոթային հիվանդությունների համար:

Մթնոլորտի մարդածին արտանետումներից վնասվում են նաև կենդանիները, բույսերը և էկոհամակարգերի բոլոր բաղադրամասերը: Արտանետվող թունանյութերի բարձր խտությունները առաջացնում են կենդանիների, թռչունների և միջատների զանգվածային թունավորումներ, որը կատարվում է շնչառական ուղիների ախտահանման կամ բույսերով սնվելու միջոցով:

Բույսերի մեջ թունանյութերը թափանցում են հերձանցքներից կամ արմատային համակարգի օգնությամբ: Գազանման թունանյութերը տարբեր ձևով են ազդում բուսականության վրա: Ածխածնի մոնօքսիդը և էթիլենը բույսերի տերևները և միամյա շվերը թույլ են վնասում, իսկ քլորի, սնդիկի գոլորշու ամոնիակի ազդեցությամբ բույսերը լրիվ չորանում են: Չափազանց վտանգավոր է ծծմբի երկօքսիդը, որից չորանում են շատ ծառատեսակներ:

Մարդածին ազդեցությունը ջրոլորտի վրա և դրա հետևանքները:

Բնական ցանկացած միջավայրի ջրոլորտի փոփոխություն, որը կատարվում է մարդու գործունեության հետևանքով, բնորոշվում է որպես մարդածին ազդեցություն: Ջրոլորտում նույնպես կատարվում են մարդածին ազդեցության փոփոխություններ: Դրանք առավելապես բացասական բնույթ ունեն և հաճախ աղտոտում են ջրոլորտը: Ջրային որոշակի աղտոտումը կատարվում է նրա մեջ վնասակար նյութեր անցնելու պատճառով, որի արդյունքում փոխվում է ջրի համր, հոտը, թափանցիկությունը, ֆիզիկական և քիմիական հատկությունները:

Ջրային հիմնական աղտոտիչները կարող են լինել քիմիական, ֆիզիկական, կենսաբանական և այլն:

Քիմիական աղտոտում- ամենատարածված աղտոտումն է, կատարվում է օրգանական, անօրգանական, ոչ թունավոր և թունավոր նյութերով:

Մեխանիկական աղտոտում – կատարվում է ջրի մեջ մեխանիկական տարրեր անցնելու միջոցով, օրինակ աղբ, ավազ, տիղմ և այլն:

Ռադիոակտիվ աղտոտում – ջրի մեջ են անցնում ռադիոակտիվ տարրեր՝ ուրան, ռադիում և այլն:

Մանրէներով աղտոտում – ջրի վարակումն է վիրուսներով, բակտերիաներով, զանազան սնկամարմիններով և սպորներով:

Ջերմային աղտոտում – կատարվում է տեխնիկական ջրեր խառնվելու դեպքում, որի ժամանակ բարձրանում է ջրի ջերմաստիճանը և փոխվում նրա քիմիական և գազային բաղադրությունը: Ջրերի աղտոտումը կատարվում է հիմնականում կոմունալ-կենցաղային, արդյունաբերական և այլ ծագման ջրախառնուրդների, անձրևաջրերով լվացվող թունաքիմիկատների, նավթ և նավթամթերքներ, գազափոշիներ խառնվելու ճանապարհով: Այսպես կարող են աղտոտվել նաև ստորգետնյա ջրերը: Քաղցրահամ

ջրերի էկոհամակարգերը կենսաածին նյութերով աղտոտվելու ժամանակ տեղի է ունենուն էվտրոֆացում: Շատ արագ աճում է ֆիտոպլանկտոնի զանգվածը, մասնավորապես՝ կապտականաչ ջրիմուռները, իսկ կենսաբազմազանությունը աղքատանում է: Ծովային էկոհամակարգերի աղտոտման դեպքում նկատվում են էկոհամակարգերի անկայունություն, կենսազանգվածի անկում, մուտագեն և կանցեռագեն երևույթներ, կենսաածին և քիմիական ծագման թունանյութերի ավելացում:

Աղտոտված ջրերի օգտագործումը և շփումը դրա հետ ծանր հետևանքներ կարող է ունենալ մարդու առողջության վրա: Օրինակ, կարող է բարձրանալ տիֆոյ, խոլերայով հիվանդանալու ռիսկը:

Գլոբալ էկոլոգիական խնդիրները

Արդյունաբերության ճյուղերի և տրանսպորտի զարգացման ու այլ պատճառներով էկոլոգիական վիճակը վատանում է ոչ միայն առանձին երկրներում, այլև ստանում է համաշխարհային (գլոբալ) տարածում:

Էկոլոգիական գլոբալ խնդիրների լուծումը արդիական է և պահանջում է համաշխարհային միասնական ծրագրերի ստեղծում ու դրանց իրագործում:

Էկոլոգիական գլոբալ խնդիրներ են համարվում՝

1. Կլիմայի փոփոխությունը և երկրագնդի ջերամցումը – բնորոշվում է նաև ջերմոցային էֆեկտ հասկացությամբ: Երկրագնդի ջերմացումը նկատվում է հատկապես 20-րդ դարի վերջից, որի պատճառը ջերմոցային գազերն են (CO₂, CH₄ ազոտի օքսիդները, ֆրեոնը ,աերոզոլները և այլն):

Դրանք մթնոլորտում գործում են ինչպես ջերմոցի ապակիները՝ արագել երկրի մակերևույթ են հասնում արեգակի ճառագայթնրը և արգելափակում են երկրից ջերմության անդրադարձը: արդյունքում բարձրանում է հողի և օդի ջերմաստիճանը, փոխվում է եղանակը և կլիման:

Ջերմոցային գազերը, հատկապես CO₂, մթնոլորտում ավելանում են նավթի , գազի և այլնի այրման ծավալները մեծացնելու պատճառով: Գիտնականները հաշվարկել են, որ այսպիսի ընթացքի դեպքում 2010թ. երկրագնդի ջերմությունը կբարձրանա 2-4 C-ով: Դա կարող է բերել աղետալի վիճակի, մասնավորապես բնեռային սառույցների հալոցքաջրերը կարող են ծածկել շուրջ 30 երկրների ծովամերձ տարածքները, հարթավայրային երկրներում կմեծանան ճահճացման, իսկ լեռնային երկրներում՝ անապատացման երևույթները:

2. Երկրագնդի օզոնային թաղանթի քայքայումը – առաջին անգամ երևույթը գրանցվել է 1975-ին, ապա 1985թ, երբ ստրատոսֆերայում կրճատվել է օզոնի քանակությունը:

Վերջին 30 տարում օզոնի ամենամեծ կորուստները՝ 42-50% դիտվել են Անտարկտիդայում: Տարածությունը, որտեղ պակասում է օզոնի խտությունը, կոչվում է «օզոնային անցքեր»: Դրանցով երկրի մակերևույթ են հասնում ուլտրամանուշակագույն և կարճալիք ճառագայթները, որոնք կարող են առաջացնել արևային այրվածքներ, մաշկի քաղցկեղ, աչքերի կատարակտ, թուլացնել մարդու իմունային համակարգը: Օզոնի շերտի քայքայման մարդածին ազդեցություն է համարվում ֆրեոն գազի օգտագործումը: Տրոպոսֆերայում ֆրեոնը անվտանգ է, հասնելով օզոնային թաղանթին, այն քայքայվում է, առաջացնելով քլորի ակտիվ ատոմներ, որոնք իրենց հերթին քայքայում են օզոնի շերտը:

Օզոնային թաղանթի քայքայումը վնասում է ոչ միայն մարդկանց առողջությունը, այլև մեծացնում է ջերմոցային էֆեկտը, իջեցնում է բերքատվությունը, դեգրադացնում է հողերը, աղտոտում շրջակա միջավայրը:

3. Անտառատարածքների կրճատումը — շատ վնասակար երևույթ է, որի դեպքում կարող են վատանալ մթնոլորտի բաղադրությունը, ջրապաշտպան և կլիմայակարգավորման ֆունկցիաները:

4. Մեծ տարածքների անապատացումը — կարող է տեղի ունենալ մասսայական անատառահատումների և կլիմայի ջերմացման պայմաններում:

5 . Կենսաբազմազանության կրճատումը և աղքատացումը — պայամանավորված է հիմնականում մարդկածին ազդեցությամբ:

Եզրակացություն

Այսպիսով մարդու առողջության վրա ազդում են բնական-էկոլոգիական և սոցիալ-էկոլոգիական գործոնները: Բնական-էկոլոգիական գործոններով են պայամանավորված վարակիչ հիվանդությունները: Դրանց մեջ հատուկ տեղ ունեն բնական օջախային վարակները: Վարակի բնական աղբյուրը (օջախ) - հիավանդության հարուցիչները, դրանց փոխադրողները և կենդանի կրողները գոյություն ունեն որոշակի բնական պայմաններում, կախված չեն մարդու ապրելակրպի հետ: Մարդը կարող է վարակավել վայրի կենդանիներից մշտապես ապրելով այդ վայրում կամ պատահական շփումների ժամանակ:

Հիվանդությունների բնական օջախները կապված են որոշակի տարածքների, լանդշատի տիպի, կլիմայի հետ:

Հատուկ ազդեցություններ են համարվում աղմուկը, կենսաբանական և էլեկտրամագնիսական դաշտերի ազդեցությունը, ճառագայթումը: Արտադրական, տրանսպորտային և այլ կարգի աղմուկը կարգավորվում է սանիտարաառողջական նորմերով:

Էկոլոգիական ահաբեկչությունը նույնպես շատ վտանգավոր է, որի կանխման համար կիրառվում են միջոցառումների համալիր, ահաբեկչությունը կանխող համակարգ՝ կարանտին, հակահրդեհային, թունավոր և ռադիոակտիվ նյութերը վերահսկող ծառայությունների համակարգված աշխատանքի կազմակերպում և այդ ուղղությամբ միջազգային համագործակցություն:

Էլեկտրամագնիսական դաշտի ազդեցությունից մարդկանց պաշտպանությունը պահանջում է հոսանքի բարձր լարման գծերի պաշտպանիչ գոտու ստեղծում:

Անտառային պաշարների արդյունավետ օգտագործման համալիրը ընդգրկում է անտառահատման ծավալների սահմանումը, անտառավերականգնման, և անտառասանիտարական աշխատանքների կազմակերպումը :

Կարևոր նշանակություն ունի բույսերի գենոֆոնդի ստեղծումը և պաշտպանությունը, որտեղ բույսերի կենսաբազմազանությունը պահպանվում է սերմերի ձևով:

Բնական պաշարները անընդհատ օգտագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա որոշակի ծանրաբեռնվածություն է ընկնում:

Մարդածին ազդեցության նկատմամբ էկոհամակարգերի ընդհանուր կայունության գնահատականը բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով՝

1. կենդանի և անկենդան օրգանական նյութերի պաշարներով,
2. օրգանական նյութերի ստեղծման ինտենսիվությամբ կամ բուսական ծածկույթի արտադրանքով,
3. Տեսակային և կառուցվածքային բազմազանությամբ: Էկոլոգ գիտնականները պարզել են, որ որքան բուսազանգվածը էկոհամակարգում մեծ է, այնքան միջավայրը կայուն է: Այս դեպքում կարևորվում են լուսասինթեզող օրգանիզմները, քանի որ նրանք կարգավորում են մթնոլորտի բաղադրությունը:

Բնական էկոհամակարգերի բարենպաստ վիճակը պահպանվում է միայն այն դեպքում, երբ թույլատրելի ազդեցությունը համապատասխանում է թույլատրելի ծանրաբեռնվածությանը: Այդ պատճառով պետք է հաշվարկել մարդածին ազդեցության և մարդածին ծանրաբեռնվածության քանակական բնութագրերը:

Շրջակա միջավայրի ծանրաբեռնվածության նորմաները սահմանելու ժամանակ հաշվի են առնվում միջավայրում ստեղծվող ցանկալի որակական ցուցանիշների, կենսոլորտի և նրա տարրերի վրա մարդածին ազդեցության մակարդակը: Էկոլոգիական ծանրաբեռնվածության նորմավորումը նպատակաուղղված է ամբողջությամբ պահպանել բնական էկոհամակարգերը և կենսաբանական համակեցությունները:

Օգտագործվող գրականություն

1. Բնագետ (ամսագիր) N 3-4 2010թ.
2. Ս.Մ. Գրիգորյան Էկոլոգիա- Հարցեր և համառոտ պատասխաններ
3. Համացանցից՝ Բնապահպանական հիմնախնդիրներ